# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1

## N ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2022-ԱՎՎ/ՓԿԾ/Ա-1
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան**

<<03>> <<03>> **2022թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հատուկ կապ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ղասաբօղլյանի (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 07.02.2022թ.-ին կնքված **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2022-ԱՎՎ/ՓԿԾ/Ա-1** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2022-ԱՎՎ/ՓԿԾ/Ա-1 ծածկագրով պայմանագրի 4.1 կետով սահմանված **19 500 000** (տասնինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի վճարումը, որի վճարումը Գնորդի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | <<Հատուկ կապ>> ՓԲԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Չարենցի 4/129 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Ինեկոբանկ>> ԲԲԸ |
| Հ/Հ 900011023554 | ՀՀ 2052822133751001 |
| ՀՎՀՀ 01569613 | ՀՎՀՀ 02509254 |
| հեռ. 59-61-52 | |
| Էլ. փոստ: policety.gnumner@mail.ru | |
| Վ. Մովսիսյան | Մ. Ղասաբօղլյան |
| /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ (ստորագրություն) | |
| Կ.Տ | |

Հավելված 1
<<03>> <<03>> 2022թ. կնքված
N ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2022-ԱՎՎ/ՓԿԾ/Ա-1 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| ...ավերով ...ատեսված ...իաբաժնի ...ամարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Ծառայության անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1. | 64121200/1 | Փոստի առաքման ծառայություններ | | 4 282 000 | 4 282 000 | 9 560 000 | 9 560 000 | 9 560 000 | 13 900 000 | 13 900 000 | 13 900 000 | 19 500 000 | 19 500 000 | 19 500 000 | **19 500 000** |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | <<Հատուկ կապ>> ՓԲԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ք. Երևան, Չարենցի 4/129 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Ինեկոբանկ>> ԲԲԸ |
| Հ/Հ 900011023554 | Հ/Հ 2052822133751001 |
| ՀՎՀՀ 01569613 | ՀՎՀՀ 02509254 |
| հեռ. 59-61-52 | |
| Էլ. փոստ: policetv.gnumner@mail.ru | |
| _______ Վ. Մովսիսյան | _______ Մ. Ղասաբօղլյան |
| /ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/ (ստորագրություն) | |
| Կ.Տ | |